



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ  
ՀՐԱՄԱՆ

No 253-Ա/2

22.03.2018թ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ  
2018 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 181-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 1579-Ն որոշմամբ հաստատված հավելված N 1-ի 31-րդ կետով՝

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2018 թվականի մարտի 1-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 181-Ա/2 հրամանի հավելվածում 7-րդ կետը լրացնել նոր 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ ենթակետերով՝

«17) նախարարության համակարգում ֆինանսական կառավարման արդյունավետ համակարգերի առկայության, նախարարության տրամադրության տակ գտնվող ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում աշխատակազմի ղեկավարին .

18) ապահովում է նախարարության կողմից օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ֆինանսական միջոցների հավաքման աշխատանքները.

19) իրականացնում է նախարարության հիմնարկների, այլ կազմակերպությունների բյուջետային դասակարգմանը համապատասխան, բյուջեով նախատեսված միջոցների բաշխման աշխատանքները.

20) իրականացնում է նախարարության ֆինանսական միջոցների վատնման, չնախատեսված ծախսերի կատարման կանխարգելման աշխատանքները:»:

**ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ**